

VI.

ՍՈՎԱՐՈՒԹԵՒՆՆԵՐ

Ա. ԿՐՈՆ ԵՒ ՀԱԻՍՏԱԼԻՔ

Հայ-բոշալի կեանքը ուսումնասիրելու ժամանակ մենք
լաճախ կը հանդիպենք այնպիսի բուն հայկական բարքերի,
որոնք մեր մէջ եթէ ոչ վերացել են, գոնէ արհամարհու-
թեան կամ մոռացութեան են մատնուել։ Կրօնական ջերմե-
ռանդութիւնը, լուսաւորչական եկեղեցոյ ծէսերին հաւատ-
քով վերաբերմունքը, դէպի կրօնաւորն ունեցած բացարձակ
հաւատքն ու լարգանքը հայ-բոշալի մէջ աւելի շեշտուած է,
քան հայի մէջ։ Զնալելով այդ բոլորին, դեռ չեն արմատա-
խիլ եղած բոշաների մէջ հին բարքերի այնպիսի մնացորդ-
ներ, որոնք ալլոնդակ հակասութիւն են կազմում և որոնք
հայ եկեղեցւոյ պատուերներին լիովին հակառակ են գնում։
Եւ դրա համար էլ այդ հին սովորութիւնները համարձակ
չեն գործադրւում, այլ գաղտնի։ Այնպէս որ մի կողմից ջեր-
մեռանդութիւնն ու բարեսլաշտութիւնը, միւս կողմից դէպի
ծէսերն ունեցած գաղտնի զարտուղութիւնները, բոշալից
դարձրել են ակամայ կեղծաւոր, ակամայ ստող։ Ասենք եթէ
խորը քննուի, բոշան, ինչպէս և բոլոր ցիգանները, կրօնի
մասին ոչ մի գաղափար չունին *). Արա կարծիքով եկեղեցի
գնալ, մոմ վտուել, քահանալին պատուել—ոհա բոլորը։ Աս-

*.) Տես նաև ոլ. Ե. Լալալիանի՝ վկայութիւնը այդ մասին, Աղջ. Հանդետ գիրք ա. և Պր. Վանդեանի (Հայ-բռշաներ) լոգութում, «Մուրճ» 1892, էր. 1317:

տուծոյ մասին նա գիտէ կամ կրկնում է մեքենաբար ալն, ինչ որ միջավայրում մտածում է. եկեղեցուց գուրս ազօթել նա չգիտէ և չէ էլ ըմբռնում աղօթքի նշանակութիւնը։ Կրօնը նրա համար իբր սովորութիւն է և ուրիշ ոչինչ։

Ճշմարիտ է, բոշաների կեանքը վեր ի վերոյ միայն ուսումնասիրողները ասում են, թէ «տգէտ չեն իրենց ունեցած կրօնին, այլ մեղմացել են քրիստոնէտական կրօնի շնորհիւ, ժամասէր են և երկիւղած և «առ ի խորհուրդս մերձենալ ոչ անփոլք» (Տեղագրութիւն 'ի փոքր և 'ի մեծ Հալս, եր. 81—82): Նոյնը կրկնում է նաև Գ. եալ. Սրուանձտեանը իր «Թորոս ազբար» գրքում (Հ. ա. եր. 26—27), թէ «չերմեռանդ են եկեղեցեաց, եկեղեցականաց և եկեղեցւոյ օրինաց»... բայց խորապէս քննելով կարելի է ալն եզրակացութեան հասնել, որ այդ բոլորը բոշաները արել են առ երեսս միայն, ինչ որ արտաքինն է կատարելով. ոչինչ գաղափար չունին կրօնի մասին, որովհետեւ ոչ կարգում են և ոչ էլ սիրում կրօնի մասին խօսել կամ լսել։ Քահանալին նրանք ականջ են դնում, լարգում են և նրա անէծքից սաստիկ վախենում. այնուամենալիւ լաճախ հակառակ են գնում եկեղեցական ամենահիմնական օրինաց։ Կրօնական տօներին իսկ այնքան նշանակութիւն չեն տալիս. պահում են, շատ օղի խմում, նուագում, պարում, բայց ոչ շնորհաւորութեան են գնում և ոչ էլ ո և է ուրիշ բարեալաշտական քայլ անում։ Տօների մէջ առանձին շուքով տօնում են միայն ոչ եկեղեցական տօնը—նոր տարին։ Այդ օրը նրանք կերակուրներով և արագով գնում են միմեանց տուն և շնորհաւորում։ Բայց տօնը սկսում է առաւօտ վաղ, երբ բոլորը շուտով զարթնում են, մաքրում և լուացնում (մի բան որ ամբողջ տարին մոռացութեան են տալիս) լետոյ, առանց բացառութեան եկեղեցի են գնում։ Ոչ մի տօն ալդպէս չէ տօնւում նրանց մէջ։

Կրօնական նախապաշտումներ բոլորովին չունին. խուսափում են աղօթելուց մէկի վրայ, հիւանդութիւնները սրբերի չեն վերագրում, մատադ չունին, ուխտագնացութիւն

բոլորովին ^{*}): Թէև Գ. Եալ. Սըռւանձտեանը ասում է, «որ նրանց բարեպաշտութեան գագաթնակէտն է «մուխսի» գառնալը, բայց գոնէ ես չեմ ճանաչում մի բոշա, որ «մուխսի» դարձոծ լինի և կամ երբ և իցէ մտածելիս՝ որ Երուսաղէմ գնալ: Չնայելով որ ասում են, թէ գուշակութեամբ և կախարդութեամբ չեն զբաղւում (և այդ՝ վախենալով հայ եկեղեցւոյ նզովքից), սակայն ինձ հանդիպել է Թիւրքա-Հայատանում միքտնի հայ-բոշաների գուշակել տալ ինձ համար թղթով, բակլայով և թասի մէջ լցրած ջրին ակնպիշ նայելով: Ի հարկէ այդ կատարւում է խիստ գաղտնի և եթէ խօսում էք այդպիսի հարցի մասին, վախեցած ասում են «մեղք է, մենք էլ այդպիսի բաներով չենք զբաղւում»: «Ել» բառը շատ ճարտարախօս է բացատրելու համար, որ նրանց մէջ եղել են գուշակողներ, հմալողներ և ալլն, որոն քրիստոնէութեան շնորհիւ, հետզհետէ անհետացել են կամ եթէ կան էլ, խիստ գաղտնի են գոյծում:

Այս բոլորի հետ հայ-բոշաները արտաքուստ իրենց խիստ երկիրդած և չերմեռանդ ցոլց տալով, ներքուստ պահպանում են իրենց հին բարքերը: Այսպէս՝ եկեղեցական-կրօնական ամուսնութեան շատ էլ կարեւորութիւն չեն տալիս և ալօրինի կենակցութիւնը տինքան յաճախ է պատահում, որ շատ էլ ամօթ չէ համարւում:

Բ. ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՐՍԱՆԻՔ

Չհասութիւն ասած բանը նրանց մէջ բոլորովին չկալ. բացի քոյր և եղբօրից, միւս ազգականները իրար վրայ ամուսնանալ, իրար հետ կենակցելը սովորական է. հօրեղբօր աղջիկ. եղբօր կին, եղբօր աղջիկ և ալլն համարւում են հարսնացուներ. հայ եկեղեցուց թագցնելու համար այդ չհա-

* 1 Տես այդ մասին նաև Գր. Վանցիանի «Հայ-բոշաներ» լոգուածում, «Մուրա» 1892, եր. 4318:

սութիւնները, ընդհանուր միաբանութեամբ յաջողվում են շատ անդամ խարել քահանալին և հոգեոր կառավարութեանը։ Ոչ-հասակակիցների ամուսնութիւն էլ սակաւ չէ պատահում։

Հայ-բոշաները շատ շուտ են ամուսնացնում իրենց որդոց. 13 տարեկան աղջիկը համարվում է հարսնացու և տղալին էլ 15 տարեկանից ոչ ուշ՝ ամուսնացնում են։ Դրապատող ազգերի և նոյն իսկ հաւատակից հայերի հետ, ինչպէս ասացինք, խնամութիւն չեն տնում։ Սիրային դէպքեր պատահում են. պատահում է նոյնպէս աղջիկ փախցնել, բայց տղալի ընտանիքը եթէ չէ կամենում մշտական թշնամի մնալ աղջկայ ընտանիքի հետ, փողով կամ ու է բանով գոհացնում է նրանց, նախօրօք երկար վիճաբանութեամբ վարձատրութեան քանտակութիւնը վճռելով։ Առհասարակ մեծ վէճերի և կռիւների առիթ է հարսնախօսութիւնը, որովհետեւ տղալի հայրն է, որ սլարտաւոր է գնել աղջիկը, գլխագին տալով։ Թիւրքա-Հայաստանում իրը գլխագին տալիս են մեծ էշեր, ջորիներ, սլաշարեղէն *), իսկ Կովկասում սկսած 100-ից մինչև 250 ր. փող, նայելով թէ աղջիկը որքան ընդունակութիւն է ցոլց տալիս ալնդերեսութեան, թափառելու և մուրալու։ Այդ ընդունակութիւններն է աղջկայ արժանաւորութեան նժարը, չմուանալով գեղեցկութիւնը։ Քանի աղջիկը նկատուած է համարձակ, արագաշալժ, ճարալիկ, ալնդերես, տինքան նա թանգ գին ունի, թէ կուզ շատ էլ գեղեցիկ չլինի։ Ընտրութեան մէջ որդին ըուլորովին չէ խառնւում և կուրօրէն հնազանդում է ծնողաց հրամանին. իսկ նշանած տղան, քանի դեռ չէ ամուսնացել, ուղղակի հարսնութիւն է անում իր աներոջ և զոքանչի համար. նա նրանց հետ չէ խօսում երբէք և երբ ամուսնացաւ, իրը բերանաբացէք մի նուէր է ստանում և ապա թէ սկսում խօսել։

Թէ այս ժամանակ և թէ առհասարակ, բոշաները վերին աստիճանի յարգանքով են վերաբերում դէպի ծերերը.

*.) «Թորոս աղբար» հ. ա. եր. 26—27:

ոտքի են ելնում նրանց անցնելիս, ձեռքն են համբուրում պատկառանօք և նրանց խօսքին հնազանդում։ Ահիլների (ծերերի) այդ ազգեցութիւնը մնացորդ է հին բարքերի, երբ նրանցից էր կազմւում ժողովրդի կառավարչական մարմինը։

Հարսանիքը սկսում է օղի խմելով։ Փեսալի տանը մի լաւ քէֆ անելուց յետով, հարսնառուները գնում են հարսի տունը՝ տանելով իրենց հետ ուտելիք և խմելիք։ Առհասարակ հարսի տան մէջ այդ միջոցին կատարուող ծախսը հոգում է փեսատէրը։

Երբ փեսան գնում է դէպի հարսը, սրան տանում են իսկոյն գրացու կամ ազգականի տուն, որտեղից վերցնելով տանում են եկեղեցի։ Պսակի արարողութիւնից յետով գալիս են փեսալի տանը և սկսում է մի նոր քէֆ, որի ընթացքում նուագում են, պարում, շատ խմում, շատ խօսում և լաճախ լաւ էլ կովում։

Ուշադրութեան արժանի արարողութիւնը այն է, որ երբ հարսին եկեղեցուց տուն են բերում, փեսալի հետ իսկոյն տանում են նախ թոնիրի շուրջը պտտեցնում, յետոյ օջաղի առաջ օրհնում, որից յետով հարսին իսկոյն մտցնում են մի թանձր վարագոյրի ետև։ Այնտեղ է մնում նա մինչև հարսանիքի վերջը։ ոչ ոք չէ կարող մտնել այնտեղ բացի հարսնաքոյրերը. փեսան իսկ իրաւունք պիտի ստանալ ներս մտնելու համար։

Բայց ինչպէս երեսում է, եղել է և կամ նոյն իսկ այժմ էլ կալ գաղտնապէս, իրենց մէջ միայն կատարուող մի տարօրինակ արարողութիւն, որի մասին բոլորը պատմում են, սկսած պրօֆ. Պատկանեանից, Պասպատ'ից մինչև վայր ի վերոյ նոր հետազօտողները։

Ես մէջ կը բերեմ բոլորը՝ իրենց բառերով։ «Պատմում են—ասում է մի հայ հետազօտող ^{*)}» — որ հարսանիքը բո-

^{*)} Այս կտորը հանել եմ մի ալէքսանդրապոլցի պ. Ա. Միթարեանի «Նիրակ» անտիպ աշխատութիւնից, որի բոշակերէն բառարանից մեծապէս օգտուել եմ, ի հարկէ անձամբ բոլոր նրա ունեցած բառերը վերաստուգելով բոշաների բերանից։

լորսվին վերջանալուց յետոյ, երբ հըաւիրեալները ցըւում են և մնում է միայն փեսալի ընտանիքը ազգականների հետ, փեսան մտնում է թոնիր, իսկ նորահարսը կանգնած թնդրափին՝ ձայն է տալիս «Աւէ, աւէ, ել»։ Փեսան թնդրից պատասխանում է «Չեմ ելներ»։ Հարսը կրկին ասում է «Եկո, ել, մալաւ կու մանգեմ» (հաց կը մուրամ), ջվալ կու տընգեմ, քեզի հաւի դոշով, փոփուռ լոշով կու պահեմ»։ Այդ խոստումից յետոյ փեսան դուրս է գալիս։ Եւ այդ՝ հայերի մէջ այնքան ընդհանրացած աւանդութիւն է, որ առածի տեղիք է տուել. երբ մէկը ուշ ուշ է երեսում կամ տնից քիչ է դուրս գալիս՝ ասում են «բոշի թագւոր ես եղել, որ չես ուզում տնից դուրս գալ»։ Պրօֆ. Պատկանեանը իր գրքի մէջ ասում է «բոշա կանայք ամուսնութեան ժամանակ խոստանում են իրենց տղամարդկանց՝ «մուրալ, խնդրել և նրանց կերակրել» *):

Մի ուրիշ հայ ազգագրող Ակնի բոշաների մասին խօսելիս՝ ասում է. «Լսած եմ, թէ հին ատենները սովորութիւն է եղեր, որ երբ բոշա մի ամուսնանայ տղջկան մը հետ, որ բոշայի ցեղէ է, ամուսնացող այլըն մազէ մեծ պարկի մը մէջ կ'իջեցունեն և կինն կըսէ «Ե՛լ խարարէն, ել խարարէն, ըստէնջդ (արքունի տուրք ի հնումն) պիտի տամ, խարաջդ (նոր տուրք) պիտ' տամ, սալլամիշ պիտի ընեմ, ես պտտիմ, քեզի պահեմ»։ Կինն զայս երիցս կըկնելէ յետոյ, ալին պարկէն դուրս կելնէ» **):

Երբորդ վկայութիւնը գտնում ենք «Ազգ. Հանդէս»-ի մէջ (գիրք ա.), այսպիսի խօսքերով. «Մի զառամեալ կին բոշա ևս պատմում էր՝ թէ շատ վաղ ժամանակներում կիլիսկիտնոս անունով մի մարդ չկարողանալով իր գերդաստանին ապրուստ հայթայիթել, լուսահատուել և գնացել մտել է թոնիրը, որ քաղցածութիւնից մեռնի։ Կինը եկել հանել է նրան թոնիրից և լուսագրել՝ ասելով. «Կերթամ մուրամ, քե-

*) Պատկանը. «Цыганы» եր. 69—76։

**) Ճանիկեան «Ակնալ հնութիւնք», եր. 60։

ըեմ պահեմ հաւի դոշով, փրփուր լոշով. ել, ել, մատաղ ըլիմ քեզի. ել առ թոնրէն մէմ' դուս արի» ^{**}):

Այդ կինը, որպէս ինքը ալ. Լալալեանը լալտնել է ինձ, Ալէքսանդրապօլի բոշաներից է։ Դա մի զառամեալ բոշակին է Անթառ անունով, որ երբեմն աղօթում էլ է և ինձ պատմել է միւնոյն բանը։ Մի ուրիշ բոշա նոյնալէս, մարգուանցի, պատմեց ինձ նոյնը, ասելով որ դա հնումն էր գործադրւում և որ փեսան պահարանի (դօլաբի) մէջ էր մտնում. իսկ ինքը չէ տեսել։

Երևի ծաղրի չենթարկուելու համար, բոշաները աշխատում են հաստատել, որ այդպէս սովորութիւն չկայ։ Բայց տմէն բան ցոյց է տալիս որ դա մնում է դեռ և գործադրվում, եթէ ոչ ամէն տեղ, գոնէ միքանի կողմերում։

Անթառը, բոշա պառաւը թէ ինձ և թէ ալ. Լալայեանին պատմել է, որ դրանից լետոյ սովորութիւն է դարձել, որ երբ պսակից լետոյ հարսին և փեսալին տուն են բերում, փեսան մտնում է թոնիր, իսկ հարսը «պարում է թնդրափում» վերոլիշեալ խօսքերն երգելով, մինչև որ փեսան դուրս գայ թոնրից» ^{***}):

Հարսանիքի երկրորդ օրը փեսատէրը հրաւիրում է իր այն բարեկամներին և ծանօթներին, որոնց տանը եղած ամսւնութեան ժամանակ ինքը գնացել է և սաշու (ընծալ) տարել։ Նրանք գալիս են. չգալը պստիկութիւն է համարում և մեծ ամօթ։ Նաշից լետոյ փեսատէրը մէջ տեղ է դնում մի ափսէ և հերթով՝ սաշու է ժողովում։

Հարսանիքի երկրորդ օրը քահանան նարօտը վերցնում է և հարս ու փեսան առագաստ են մտնում։ Կուսութեան ապացուցը խստութեամբ պահանջւում է։ Երկրորդ օրը տեղի է ունենում հարսի բերած օժտի քննութիւնը և

^{*}) Ազգ. Հանդէմո գիրք ա. եր. 178—179.

^{**)} Այս մասին ալ. Գ. Վանցեանը ասում է («Մուրճ» 1892, եր. 1310), որ մինչև փեսան հարսից այդ խոստումը չէ առնում, չի դուրս դալիս թոնրից և չի դնում պսակուելու։

այդ կատարում են տղամարդիկ՝ փեսալի կողմից. մի առ մի զննում են բոլոր բերածները, գնահատում և արժէք դնում, տեսնելու համար թէ որքան նա համապատասխան է վճարուծ գլխագնին:

Գ. ԹԱՂՈՒՄ

Երբ բոշան հիւանդանում է և իրենց գործ դրած միջոցները օգուտ չեն ունենում, մի խօսքով երբ մահը անխուսափելի է համարւում, իսկոյն կանչում են քահանալին՝ հաղորդելու: Յետոյ, լուրթեամբ նստում են և սպասում մահուան, որից նրանք սաստիկ վախենում են: Կանալք լուռ ու մունջ լալիս են առանց ողբալու և կամ աղմկելու: Այդպէս էլ նրանք իրենց պահում են մինչև վերջը:

Երբ հիւանդը մեռնում է, իսկոյն մերկացնում են, պատանքի մէջ կարում և նաշով շտապում դուրս հանելու տընից եկեղեցի և կամ գերեզմանատուն: Այդ օրը հանգցնում են տան բոլոր կրակները և ոչ մի կերակուր չի եփւում մեռնողի խրճիթի մէջ: Հարեւան կամ ազգական կանալքն են, որ ձուաձեղ դրած մաղերի մէջ, բերում են մեռեալի տունը:

Այրին կամ ազգականները ոչ սև են հագնում և ոչ էլ սուգ պահում: Ամէն պարտականութիւն վերջանում է թաղումից յետոյ. այրի կինը ազատ է և եթէ ուզող ունեցաւ, նոյն իսկ մի շաբաթ յետոյ ամուսնանում է: Մեռնողների լիշտակը սակայն պահպանւում է օջախի մէջ շաբաթը մի անգամ կրակ անելով: Մեռնող տմուսնոյ ունեցածը, թէկուզ որդի էլ չունեցաւ, անպայման՝ այրիի ժառանգութիւնն է և մեռնողի եղբայրը, քոյրը և այլն ոչինչ չեն ստանում թողածից:

Թափառականութեան մէջ, ինչպէս ասացինք, եթէ գիւղը մօտ է, մեռեալին կապում են էշի վրալ և հասցնում գիւղ, կրօնապէս թաղելու համար. եթէ ոչ՝ մի փոս են փորում, թաղում առանց աղօթքի, տերեւներ ծածկում վրան կամ խոտ՝ և հեռանում:

Դ. ՏՆԱՅԻՆ ԲԺՇԿՈՒԹԻՒՆ

Այս խնդրի վերաբերեալ մեր տեղեկութիւնները առ ալժմ շատ սակաւ են. սակալն խիստ հետաքրքիր է, թէ նրանք ինչ բժշկական միջոցներ են գործադրում վերքերի, անասնաբուժութեան համար:

Ասենք բոշան շատ սակաւ է հիւանդանում: Հիւանդութիւններից ամենասովորականը տենդն է և դրա դէմ գործածում են էզ իշու կաթը, որի մէջ կաթեցնում են իշուկաթնուկ կոչուող բոլոսի կաթից միքանի կաթիլ: Այդ վերին աստիճանի դառն կաթիլները խինինի պէս ազդում են և հիւանդը չուտով լաւանում է ^{*)}): Հիւանդութիւնները երբէք չեն վերագրում ու է սրբի, վատ աչքի կամ այլ սնոտիապաշտական հաւատալիքների և բժշկութեան համար էլ երբէք չեն դիմում մատաղի, ուխտագնացութեան, աղօթքի և այլն: Բոշան այդ տեսակ ոչ մի սնոտիապաշտութիւն չունի, որպէս բոլոր քրիստոնեայ իրեն շրջապատող ազգաբնակութիւնը:

Ե. Մ Ն Ո Ւ Ն Գ

Բաշտ կնոջ ծնունդը շատ պարզ է. լզութեան ամիսները, մինչև վերջին ըստէն նա ոտքի վրայ է և նոյն աշխուժութեամբ գործում է կամ թափառում: Նատ դիւրութեամբ, զրեթէ առանց երկունքի է ծնում և հազիւ միքանի օր պառկում. իսկ եթէ ճանապարհին է, մի ժամ հանգստանում է, լուացւում, մաքրում և նորից ճանապարհը շարունակում: Ոչ մի ծէս, սնոտիապաշտութիւն չունին թէ լզութեան ժամանակ և թէ մանուկի ծնելուց լետոյ:

^{*)}) Ինձ ասել են, որ Երեանի նահանգում նոյն բոլոսի կաթիւններն են գործածում տենդի դէմ, միայն ջրի մէջ կաթեցնելով: (Պ. Ա. Զելինսկու հաղորդածը):

Զ. ՊԱՐ ԵՒ ԵՐԱԺԾՏՈՒԹԻՒՆ

Հարսանիքի ժամանակ նուագածուները բոշա աշըղներ են, որոնք կամ ջութակ են նուագում կամ հովուական տիկ: Պարերը մեծ մասամբ հայկական են և կանալք չեն պարում տղամարդկանց հետ, այլ առանձին: Խնքնուրոյն, բուն բոշայական պարերի մասին Վայեանը (Vaillant) լիշտակում է ըօմայկա և խաչի-պար (որ պարում են Զատկին): Այդ պարերը, ասում է նա, նմանում են հնդկական բալագերների կամ եգիպտական ալմա և հավազի պարերին: Եթէ եղել են իսկապէս հայ-բոշաների մէջ ալդպիսի պարեր, այժմ նրանցից մնացել է միայն մի տեսակը, որ պարում են բոշականալք: Պարսիկ մթրըների և թիւրք չինգէնէների մէջ կան շատ տեսակ պարեր. անշուշտ նրանց տեսել է իւրաքանչիւր ասիացի. այդ պարերը կիշեցնում են մաւրիտինական այն գրգռիչ լպիրչ պարերը, որոնք մեծ ճարպիկութեամբ գիտեն ներկալացնել նոյն իսկ Կ. Պոլսի փողոցներում, չինգէնէ կտնալք և մթրըն մանուկները՝ պարսկական խնջուքներում: Զեռքերը տարածելով, մարմինը կոտրտելով, նազանքներով լի են այդ պարերը: Պտրի ժամանակ գործածում են փոքրիկ տախտակեալ կաստանէտներ՝ հագցրած մատերին: Այդ տեսակ պարերն են, որոնք կոչւում են եգիպտական Ալմաների պարեր ^{*)}: Հայ-բոշա կանալք, ընդունելով քրիստոնէութիւնը, բաւական մեղմացրել են պարի ձեր և համեստացրել: Խաչի-պարը անշուշտ այն սօլո պարն է, որ պարում են երկու բոշա կանալք միմեանց դէմ, ձեռքերը տարածած և կաստանէտների փոխարէն բթամատով ու Յ-րդ մատով շրջփացնում: Բայց այդ պարը ոչ միայն զատկական

^{*)} Տես Ալմաների պարերի նկարագրութիւնը Եմիշեան. Պօնութում շաբաթական ամսագրութիւնը Եմիշեան. Պօնութում շաբաթական ամսագրութիւնը Եմիշեան.

տօնին, այլ և խնջուքներումն էլ են կատարում, միայն միշտ տղամարդկանցից հեռու:

Երաժշտութեան մասին Լիստի գրուածքից լետոյ աւելիքիչ բան կայ ասելու: Հայ-բոշան գրեթէ կորցըել է ինքնուրոյն երաժտութիւնը. նրա երգերը, պարերգները բոլորը հայկական են և միջավալից փոխ առած վաղուց ի վեր:

Այնուամենայնիւ ինձ յաջողուել է միքանի կտոր բաներ ձայնագրել, որոնք նման չեն բոլորովին հայկական եղանակներին և ինձ թւում է, որ զուտ բոշայական են. մանաւանդ որ իրենց բնաւորութեամբ շատ նման են եւրոպական և տաճկական ցիգանների եղանակներին:

Այդ եղանակների գաման այս է.

Ոէ, մի, ֆա, սօլ-դիէզ, լա, սի-ըէմօլ, դօ-դիէզ, ոէ.

Շատ նման է հիջազ եղանակին, բայց տարբերւում է նրանից սօլ-դիէզով: Եղանակները ճշացող են. երբեմն ջղեր հալեցնելու չափ նուրբ և ապա յանկարծ սուր և վժժացող: Այդ գամալից դուրս իբր պարերգներ՝ կան շատ մաժօր կըտորներ, որոնք առանձին ինքնատիպութիւն ունին և փոքրինչ լիշեցնում են մաւրիտինական պարերգները: Բոշաների իսկական եղանակների վրայ գաղափար ունենալու հտմարդաւական է ծանօթանալ ֆօհան Բրամսի «Բոհեմական պարերգների» և Լիստի «Հոնգարական 2-րդ ըապսօդիալի» կտորների հետ: Հայ-բոշաների ինքնուրոյն հին երաժտութիւնը, չնալելով որ ընկել է հայկականի և տաճկականի ազգեցութեան տակ, սակայն շատ նման է ընդհանուր ցիգանական ինքնատիպ եղանակներին:

